ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5216-Ա « 26 »հոկտեմբերի2026թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 463-Ն որոշման հավելվածի 44-րդ կետի 4-րդ ենթակետը:

1. Երևան քաղաքի սեփականությունը համարվող, կենցաղային թափոնների համար նախատեսված 1100 լիտր տարողությամբ պոլիէթիլենային կոնտեյներներն (այսուհետ՝ Գույք) անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկին՝ համաձայն հ.1 հավելվածի:

2. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետին՝ Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրենի հետ կնքել Գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

3. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված Գույքի հանձնման – ընդունման աշխատանքներն իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հ.2 հավելվածի:

4. Հանձնարարել հանձնաժողովի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, իրականացնել Գույքի հանձնման-ընդունման աշխատանքները:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետի վրա:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված 1
Երևանի քաղաքապետի
26.10.2026թ.
հ. 5216-Ա որոշման

ՑԱՆԿ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ

Անվանումը	Միավոր արժեքը (ՀՀ դրամ)	Քանակը	Պայմանագրի ծածկագիրը
Կենցաղային թափոնների համար նախատեսված 1100 լիտր տարողությամբ պոլիէթիլենային կոնտեյներներ	89 997	2000	03.08.2026թ. կնքված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/298-1
Ընդամենը՝	**179 994 000**		

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված 2
Երևանի քաղաքապետի
26.10.2026թ.
հ. 5216-Ա որոշման

ԿԱԶՄ
«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ

Վ.Մարգարյան — Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության աղբահանության և սանմաքրման բաժնի գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի անդամներ

Հ. Ռամազյան — Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության աղբահանության և սանմաքրման բաժնի առաջին կարգի մասնագետ

Թ. Զաքարյան — Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության վարչության բյուջետային ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ

Ռ. Սաֆարյան — «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրեն

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ